
ՀՌԻՓՄԻՄԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական

լեզուների պատմության

լեզուների ամբիոնի դասախոս

ՀՏԴ 81՝ 367

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ-ՀԱՏԿԱՑՑԱԼ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. հատկացուցիչ, հատկացյալ, իզաֆեթային կապակցություն, շարահյուսական անդամների կապակցում:

Ключевые слова и выражения: определение, определяемое, изафетное сочетание, сочетание синтаксических членов.

Key words and expressions: modifier, complement, izafet construction, cohesion of syntax members.

Լեզուներում ստորադասական կապակցության տեսակներից են խնդրառությունը, առդրություն, համաձայնությունը, ներառումը, ներմարմնավորումը և իզաֆեթը¹: Սույն հոդվածում ներկայացվում է իզաֆեթի դրսևորումները պարսկերենի հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններում, որ համեմատվում է հայերենի համապատասխան կառույցների հետ:

Իզաֆեթային կապակցության ձևաբանական ցուցիչը դրվում է գլխավոր անդամի վրա: Գլխավոր անդամը ստանում է հատուկ արտահայտություն, որից պարզ է դառնում, որ այս անդամից կախված է այլ անդամ²: Իզաֆեթային կապով արտահայտվում են որոշիչն ու որոշյալը, հատկացուցիչն ու հատկացյալը: Պարսկերենում, ի տարբերություն հայերենի, հատկացյալը նախադասվում է հատկացուցիչին, որոշյալը՝ որոշիչին: Հայերենում հատկացուցիչը արտահայտվում է սեռական հոլովով՝ ներքին կամ արտաքին թեքումով: Պարսկերենում իզաֆեթային կապակցության մեջ իզաֆեթն արտահայտվում է كسره ی اضافه (qyasre-ye ezafe) նշանով,

¹ Кодухов, В. И., Введение в языкознание, Москва, 1987, էջ 237:

² Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 230:

եթե իզաֆեթ կրող բառը վերջանում է բաղաձայնով³: Գրավոր խոսքում այդ ցուցիչը հիմնականում բացակայում է: Արտասանության մեջ հատկացյալը պահպանում է *qyasre*-ն, որ արտաբերվում է *-e* և շեշտագուրկ է: Օրինակ՝ պրս. *آه* [češmān-e ahu], հայ. *եղնիկի աչքեր*: Այս կապակցության մեջ, պարսկերեն օրինակում հատկացյալը նախադաս է հատկացուցիչին, իզաֆեթը գրաֆիկորեն չի արտահայտվում, բայց արտասանվում է: Հայերեն թարգմանությունը ցույց է տալիս, որ հատկացուցիչն արտահայտված է *-ի* արտաքին հոլովումով և նախադաս է հատկացյալին: Ձայնավորով ավարտվելու դեպքում իզաֆեթ կրող բառը ստանում է *-ye* վերջավորությունը: Օրինակ՝ պրս. *ما'نا* [ma'na-ye omr], հայ. *կյանքի իմաստ*:

Հին տեքստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ *hya*, *tya* հարաբերական դերանունները գործածվել են որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավոր նախադասությանը կապակցելու համար: Դրանք կատարել են նաև բառերի միջև որոշիչային և ստացական կապի գործառույթ, համարվել են բառեր և ոչ թե կապակցման պարզ միավորներ: Արդեն հին իրանական լեզվադարաշրջանում այս դերանունների գործառութային երկփեղկվածությունը վկայում է բառային իմաստի թուլացման և աստիճանական քերականացման մասին: Որոշիչային բառակապակցություններում հարաբերական դերանունները ժամանակի ընթացքում վերածվել են բառերի կապակցման քերականական ցուցիչի, որն էլ հետագայում դարձել է ժամանակակից իզաֆեթի հիմքը: Հայոց լեզուն, ի տարբերություն պարսկերենի (հին պարսկերենը թեքական է, ժամանակակից պարսկերենը՝ վերլուծական), պատմական զարգացման բոլոր փուլերում պահպանել է թեքականության հատկանիշը, թեև արդի հայերենը կցական կառուցատիպի լեզու է: Հայերենում հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունն արտահայտվում է սեռական հոլովով: Գրաբարում սեռական հոլովը կոչվել է նաև ստացական հոլով⁴:

³ Perry J.R., Sadeghi A. A., «Ezāfa», www.iranicaonline.org.

⁴ Աբրահամյան, Ս. Ս., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 15:

Իզաֆէթի օգնությամբ երկու բառերի միացման դեպքում առաջանում են պարզ իզաֆէթային բառակապակցություններ: Բարդ իզաֆէթային բառակապակցությունը, որ կոչվում է նաև «իզաֆէթային շղթա»⁵ ձևավորվում է երեք, չորս և ավելի բառերի կցումից:

Իզաֆէթային կապակցություններում կան բառային տարբեր կարգեր, որոնց կապակցումից առաջանում են զանազան հարաբերություններ՝ որոշիչային, պատկանելության, քանակական, տրոհական, տարածական, ժամանակային և այլն:

Իզաֆէթային բառակապակցություններում որոշիչային ամենաբնորոշ հարաբերություններից է պատկանելությունը, որը հիմնականում արտահայտվում է հատկացուցիչ-հատկացյալ կապի միջոցով:

Օրինակ՝ պրս. کتاب [ketāb-e dānešju], հայ. *ուսանողի գիրքը* բառակապակցության մեջ գլխավոր բառը նշում է առարկա, իսկ երկրորդականը՝ դեմք, որին պատկանում է տվյալ առարկան: Այս տիպի բառակապակցություններում երկրորդ բաղադրիչները պահպանում են իրենց իմաստաբանական ինքնուրույնությունը և ապահովում իզաֆէթային կապակցության հետագա ընդարձակումը: Ձարգացնենք վերոնշյալ բառակապակցությունը. պրս. کتاب

کتاب ۱۰۰۰۰۰۰۰ [ketāb-e dānešju-ye dust-e man], հայ. *իմ ընկերոջ ուսանողի գիրքը*: Կապակցությունը կրկին արտահայտում է ստացականություն, որի իմաստը հայերենում ճիշտ արտահայտելու համարը իզաֆէթային շղթան պետք է թարգմանել՝ սկսած վերջին անդամից:

Իզաֆէթային կապի ընդհանրացնող հատկության շնորհիվ պատկանելությունը դիտարկվում է լայն իմաստով՝ հանդես գալով ոչ թե միայն առարկայական, այլ նաև վերացական հարաբերությունների պլանում: Օրինակ՝ պրս. آرزو [ārezu-ye del], հայ. *սրտի ցանկություն*, امید [omid-e delbākhtegān], *սիրահարների հույսը*, [etminān-e dānešjuyān], *ուսանողների համոզմունքները*: Հայերեն

⁵ Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, Москва, 2001, էջ 363.

օրինակներում սեռական հոլովով հատկացուցիչը –ի արտաքին հոլովման է:

Նկատվում են դեպքեր, երբ պատկանելությունը կարող է ընդլայնել իր հարաբերության շրջանակը: Օրինակ՝ պրս. 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣𐭠𐭡 [farmānde-ye sepāh], հայ. *բանակի հրամանատար*, گمرک 𐭠𐭡𐭢𐭣 [emārat-e gomrok] *մաքսատան շենքը*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣𐭠𐭡 𐭠𐭡𐭢𐭣𐭠𐭡 [ostād-e dāneškade-ye irānšnesāsi] *իրանագիտության ամբիոնի դասախոս*:

Իզաֆեթային կապն արտահայտում է նաև մասի և ամբողջի հարաբերություն. այսինքն քանակական կամ տրոհական հարաբերություններ⁶: Այս դեպքերում բառակապակցության երկրորդ անդամը ցույց է տալիս առարկան ամբողջությամբ, առաջին անդամը՝ այդ առարկայի մի մասը: Օրինակ՝ պրս. 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [qatre-ye bārān], հայ. *անձրևի կաթիլ*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [loqme-ye nān] *հացի կտոր*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [guše-ye otāq] *սենյակի անկյուն*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [qale-ye kuh] *սարի կատար*:

Տարածաժամանակային հարաբերությունները արտահայտված են հետևյալ օրինակներում՝ պրս. 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [dar-e kuče], հայ. *դրսի դուռ*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [hariq-e bāzār] *շուկայի հրդեհը*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [vaz'-e Irān] *Իրանի դրությունը*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [avāyel-e zemestān] *ձմռան սկիզբը*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [ākhar-e mäh] *ամսվա վերջը*:

Քանի որ իզաֆեթային կապակցության մեջ կարող են մտնել նաև պարսկական և արաբական ծագման զանազան անորոշ դերբայներ և բայանուններ, մեծ տարածում ունեն սուբյեկտա-օբյեկտային հարաբերություն արտահայտող բառակապակցությունները: Օրինակ՝ պրս. 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [ta'gīr-e makān], հայ. *բնակատեղի փոփոխություն*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [khāndan-e ruznāme] *օրաթերթի ընթերցում*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [ta'mir-e khāne] *տան վերանորոգում*, 𐭠𐭡𐭢𐭣 𐭠𐭡𐭢𐭣 [āmadan-e u] *նրա գալը*:

Որոշակի կապակցություններում իզաֆեթային կապը հազվադեպ արտահայտում է նաև նպատակի, նշանակման

⁶ Lotfi, A. R., Persian Ezafe as a 'figure' marker: A unified analysis, California linguistic notes, vol. 39, 2014, էջ 62:

հարաբերություններ: Օրինակ՝ պրս. ﻋﺠﺎﺯﻩ ﻳﻪ ﺳﯩﻐﺎﺭ ﻛﻪﺷﯩﺪﺍﻥ [ejāze-ye sigār kešidan], հայ. *ծխելու թույլտվություն*, ﺳﻮﮪﺒﺎﺕ ﻋ ﺭﻭﻓﺎﻗﺎ [sohbat-e rofaqā] *ընկերների գրույցը*, ﺟﺎﯞﺍﺏ ﻋ ﭘﻮﺭﺳﻪﺵ [javāb-e porseš] *հարցի պատասխան*:

Պարսկերենի իզաֆեթային կապակցությունները և հայերենի հատկացուցիչ-հատկացյալ կառույցներն արտահայտում են զանազան հարաբերություններ՝ որոշային, պատկանելության, քանակական, տրոհական, տարածական, ժամանակային և այլն: Այդ իմաստները պարսկերենում արտահայտվում են իզաֆեթային վերլուծական եղանակով, արդի հայերենում՝ հոլովման կցական տիպով:

Շարահյուսական կապակցության իզաֆեթային միջոցն ավելի լայն տարածում ունի պարսկերենի կառույցներում, որի համարժեք իմաստները հայերենում դրսևորման այլ տարբերակներ ունեն:

Հ. Թորոսյան

Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը պարսկերենում և արդի հայերենում

Ամփոփում

Իրանական, թուրքական, սեմական լեզուներին հատուկ ստորադասական կապակցության եղանակներից մեկը իզաֆեթային կապն է: Սույն հոդվածում ներկայացված է իզաֆեթային կառույցը պարսկերենի հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններում: Զուգահեռներ են անցկացվում նաև հայերենի հատկացուցիչ-հատկացյալ կապի դրսևորման եղանակների հետ: Իզաֆեթային կառույցի գլխավոր գործառնություններից մեկը պատկանելության իմաստի դրսևորումն է, որը պարսկերենում ունի վերլուծական, արդի հայերենում՝ կցական կառուցատիպ:

Р. Торосян

Сочетания определения и определяемого в фарси и армянском

Резюме

Изафетная связь одна из разновидностей подчинительной связей иранских, тюркских и семитских языков. В данной статье рассматривается изафетная структура в сочетаниях определения и определяемого фарси. Представлены примеры выражений определения и определяемого в армянском языке.

Одна из главных функций изафетной структуры выражение поссесивности, который выявляется в соотношениях определения и определяемого. Поссесивность в фарси имеет аналитическую, а в армянском агглютинативную структуру.

H. Torosyan

**Modifier and complement combinations in Farsi and
Armenian.**

Summary

Izafet construction is one of the methods of subjunctive connection in iranian, turkic and semitic languages. In this article the izafet construction is introduced in the modifier and complement combinations of farsi. There is also shown the expression of modifier and complement in Armenian. The possessiveness is one of the main functions of izafet which is expressed in modifier and complement structures. The possessivness in Farsi has analytic and in Armenian agglutinative structure.